Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք. Երեւան 0012
Վաղարշյան 8/1

Հ. + 374 10 260 964
Ֆ.+ 374 10 260 961

Grant Thornton CJSC
8/1 Vagharshyan str.
0012 Yerevan, Armenia

T + 374 10 260 964
F + 374 10 260 961

www.grantthornton.am

«ԻԴՐԱՄ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միակ մասնակցին

Կարծիք

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները ներառում են «ԻԴՐԱՄ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ «Ընկերություն») ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, այդ տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին, սեփական կապիտալում փոփոխությունների մասին և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները՝ քաղված «ԻԴՐԱՄ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարվա աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվություններից:

Մեր կարծիքով 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարվա «ԻԴՐԱՄ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվություններից քաղված ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համահունչ են այդ ֆինանսական հաշվետվություններին:

Ամփոփ ֆինանսական հաշվետվություններ

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում բոլոր բացահայտումները, որոնք պահանջվում են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներում (ՖՀՄՍ): Հետևաբար, ամփոփ ֆինանսական հաշվետվությունների ընթերցումը չի փոխարինում Ընկերության աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների ընթերցմանը:

Աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվություններ

Մենք արտահայտել ենք չձևափոխված աուդիտորական կարծիք՝ այլ հանգամանքների լուսաբանումով, աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ 2017թ. հունիսի 28-ի մեր եզրակացությունում:

Այլ հանգամանքները վերաբերվում է այն բանին, որ «ԻԴՐԱՄ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական հաշվետվությունները աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, ով 2016 թվականի մայիսի 23-ին արտահայտել է չձևափոխված կարծիք այդ հաշվետվությունների վերաբերյալ:

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ ղեկավարության պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատու է աուդիտորական ստուգում անցած ամփոփ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, որտեղ ամփոփ ֆինանսական հաշվետվությունները ներկայացվում են միևնույն ձևով, ինչպես և աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունները, բացառությամբ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների, որոնք չեն ներառվում այս ամփոփ ֆինանսական հաշվետվություններում:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է, հիմնվելով մեր կողմից իրականացրած ընթացակարգերի վրա, արտահայտել կարծիք ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ՝ աուդիտի միջազգային ստանդարտ 810 *«Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացության նկատմամբ կիրառվող առաջադրանքներ»* ստանդարտին համապատասխան:

Գագիկ Գյուլբուդաղյան

Տնօրեն

Արմեն Հովհաննիսյան

Առաջադրանքի պատասխանատու

28 հունիսի 2017թ.